ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2024 թվականի N 389-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 332-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՌՈՅԱԼ ՓՐԻՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 332-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «0,01-ից 0,06» բառերը փոխարինել «0,1 մմ-ից ոչ ավելի հաստ» բառերով.

2) 2-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «0,02, 0,025, 0,03 մմ հաստ» բառերը փոխարինել «0,1 մմ-ից ոչ ավելի հաստ» բառերով.

3) 5-րդ կետի «Անվանումը» սյունակի «Պոլիվինիլ-քլորիդի թաղանթ» բառերը փոխարինել «Պոլիէթիլենային թաղանթ 0,94 և ավելի տեսակարար կշռով» բառերով.

4) 5-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «0,01-ից 0,08» բառերը փոխարինել «0,125 մմ-ից ոչ ավելի հաստ» բառերով.

5) 6-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «0,01-ից 0,08» բառերը փոխարինել «1 մմ-ից ոչ ավելի հաստ» բառերով.

6) 7-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «120 գ-ից 200 գ» բառերը փոխարինել «Տպագրության համար» բառերով.

7) 8-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «0,01-ից 0,10» բառերը փոխարինել «20 սմ-ից ավելի լայն, գլանափաթեթներով» բառերով.

8) 9-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «25 գ-ից 250 գ» բառերը փոխարինել «1 մ^2 համար 40 գրամից ոչ ավելի զանգվածով» բառերով.

9) 10-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «25 գ-ից 250 գ» բառերը փոխարինել «1 մ^2 համար 150 գրամից ոչ ավելի զանգվածով» բառերով.

10) 11-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «25 գ-ից 250 գ» բառերը փոխարինել «1 մ^2 համար 150 գրամից ոչ ավելի զանգվածով» բառերով.

11) 14-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «Սիգարետի ֆիլտրի թուղթ» բառերը փոխարինել «15 սմ-ից ավելի լայն, գլանափաթեթներով» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

21.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ